ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էյչ Գրուպ ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/58 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	Անվտանգության տեսախցիկ։ Տեսակը՝ Bullet։ Պատկերի լուծաչափը՝ առնվազն 4 ՄՊ՝ 2560×1440, առնվազն 25 կադր/վրկ։ Օպտիկան՝ ֆիքսված կամ վարիֆոկալ՝ առնվազն 2.8–4 մմ միջակայքում։ Ֆիքսված կիզակետային հեռավորությունն ընտրվում է պատվիրատուի կողմից՝ տվյալ մոդելի գործարանային տարբերակներից։ Մարդու և տրանսպորտային միջոցի հայտնաբերում և դասակարգում։ Խելացի երկակի լուսավորում՝ ներկառուցված ինֆրակարմիր և սպիտակ լուսարձակներով, առնվազն երեք ռեժիմով՝ միայն IR, միայն սպիտակ լույս և հայտնաբերման դեպքում IR-ից սպիտակ լույսի ավտոմատ անցում։ IR և սպիտակ լուսավորման հեռավորությունը՝ յուրաքանչյուրն առնվազն 30 մ։ WDR՝ առնվազն 120 ԴԲ։ Ներկառուցված միկրոֆոն։ Smart H.265+ կամ համարժեք բարելավված H.265 կոդավորման աջակցություն։ Սնուցում՝ PoE՝ IEEE 802.3af։ Պաշտպանվածության աստիճանը՝ առնվազն IP67։ • Մատակարարվող տեսախցիկները պետք է համապատասխանեն սույն տեխնիկական բնութագրի բոլոր պահանջներին և լիարժեք ինտեգրվեն ծառայությունում արդեն գործող Dahua DHI-NVR5432-EI2 և DHI-NVR5464-EI2 տեսագրող սարքերին՝ ապահովելով հիմնական և օժանդակ տեսահոսքերի դիտում , Smart H.265+ կոդավորմամբ տեսահոսքերի ընդունում և պահպանում, իրադարձությունների, ինչպես նաև մարդու և տրանսպորտային միջոցի դասակարգման տվյալների փոխանցում, ցուցադրում և որոնում, ժամի համաժամացում, տեսախցիկների հեռավար կարգաբերում, firmware-ի տարբերակի դիտում և թարմացում NVR-ի միջերեսից։ • Յուրաքանչյուր տեսախցիկի միացման համար մատակարարը պետք է անվճար տրամադրի 60 մետր արտաքին տեղադրման համար նախատեսված FTP Cat5e մալուխ՝ ընդհանուր ֆոլգայապատ էկրանով, PE կամ HDPE արտաքին

	պատյանով, ուլտրամանուշակագույն ճառագայթների և խոնավության նկատմամբ դիմացկուն, ամբողջական պղնձե՝ առնվազն 24 AWG կամ ավելի հաստ հաղորդիչներով և PoE IEEE 802.3af/at ստանդարտներին համատեղելի։ Քրեակատարողական հիմնարկներում առկա է գործող տեսահսկման համակարգ և համապատասխան ցանցային ենթակառուցվածք։ Նոր տեսախցիկների տեղադրման աշխատանքները պետք է իրականացվեն գործող համակարգի համապատասխան PoE կոմուտատորից մինչև տեսախցիկի՝ պատվիրատուի կողմից նշված տեղադրման վայրը։ Տեսախցիկների տեղափոխումը ՀՀ ԱՆ «Սևան», «Նուբարաշեն», «Աբովյան», «Արթիկ», «Վանաձոր», «Գորիս» և «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներ, ինչպես նաև ստորև նշված բոլոր աշխատանքների կատարումը, անհրաժեշտ նյութերի և պարագաների տրամադրումը պետք է իրականացվեն մատակարարի կողմից՝ անվճար ։ 1. Մատակարարը պետք է իրականացնի տեսախցիկների տեղադրումը, համապատասխան PoE կոմուտատորից մինչև պատվիրատուի կողմից նշված տեսախցիկի տեղադրման վայր մալուխի անցկացումը, մալուխի պատշաճ ամրացումը, տեսախցիկի մոնտաժումը, միացումը և տեսադաշտի կարգաբերումը ։ 2. Տեղադրման համար անհրաժեշտ բոլոր միակցիչները, ամրակները, կցորդիչները, մոնտաժային տուփերը և այլ օժանդակ ու ծախսվող նյութերը պետք է տրամադրվեն մատակարարի կողմից։ 3. Յուրաքանչյուր տեսախցիկի մոտ պետք է տեղադրվի պտուտակներով փակվող՝ առնվազն IP65 պաշտպանվածության աստիճան ունեցող հերմետիկ մոնտաժային տուփ։ Մալուխների փաստացի երկարությունը կարող է անհավասարաչափ բաշխվել տեսախցիկների միջև՝ ելնելով տեղադրման վայրերի պայմաններից, սակայն տրամադրվող մալուխի ընդհանուր երկարությունը պետք է հավասար լինի մատակարարվող տեսախցիկների քանակի և 60 մետրի արտադրյալին, իսկ տեղադրման աշխատանքներից հետո չօգտագործված մալուխի մնացորդը պետք է հանձնվի պատվիրատուին։ Տեսախցիկների, մատակարարված նյութերի և մատակարարի կողմից կատարված տեղադրման աշխատանքների երաշխիքային ժամկետը պետք է կազմի առնվազն 12 ամիս՝ ընդունման-հանձնման օրվանից։ Երաշխիքային դեպքի մասին ծանուցումն ստանալուց հետո մատակարարը պարտավոր է առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում արձագանքել, իսկ հայտնաբերված անսարքությունը վերացնել կամ սարքավորումը համարժեք նոր սարքավորմամբ փոխարինել առավելագույնը 7 աշխատանքային օրվա ընթացքում։ Երաշխիքային սպասարկումը, իրականացվում է մատակարարի կողմից ամբողջությամբ անվճար։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Эйдж Групп ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/58 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	